Փաստաբանները պայքարում են ՀԴՄ-ների դեմ

15.02.2011 11:08

Փաստաբանները պայքարում են ՀԴՄ-ների դեմ

Փաստաբաններին հաջողվեց մտցնել մի քանի փոփոխություններ, բայց պայքարը դեռ շարունակվում է

Անցած տարվա վերջին արտահերթ նիստի ժամանակ կառավարությունը Ազգային Ժողով էր ներկայացրել ավելի քան 30 օրենքի նախագիծ, ինչի կապակցությամբ իրենց դժգոհությունն էին հայտնել ԱԺ նախագահը և պատգամավորները ՝ պատճառաբանելով, որ եթե ԱԺ-ն օրենք ընդունող մարմին է և ոչ կառավարության կողմից ներկայացվող տեքստերը մեխանիկորեն վավերացնող, ապա հնարավոր չէ նման սահմանափակ ժամկետում այդ քանակի օրենքների նախագծերին ծանոթանալ, քննարկել, պարզել Սահմանադրությանը համապատասխանությունը և ընդունել:

Այդ 30 օրենքներից մեկն էլ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծն էր, որն ընդունվեց 2010 թվականի դեկտեմբերի 22-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից՝ վերը նշված արտահերթ նիստի ժամանակ, որով առաջարկվել է Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի “ժգ” ենթակետը ճանաչել ուժը կորցրած:

Նշված փոփոխությունը առաջացնում է փաստաբանական և նոտարական ծառայություններ մատուցող անձանց համար հսկիչ-դրամարկղային մեքենաների տեղադրման և կիրառման պարտականություն:

Նախագիծը Ազգային Ժողով ներկայացման օրվանից փաստաբանները Փաստաբանների պալատի գլխավորությամբ բազմաթիվ պատճառաբանված առարկություններով հանդես եկան Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի “ժգ” ենթակետը ուժը կորցրած ճանաչելու դեմ: Փաստաբանների պալատը 16.12.2010թ. N1/402 գրությամբ դիմեց ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնելով փաստարկներ նոր օրինագծի դեմ: Ինչպես նաև Եվրոպայի փաստաբանների պալատների և միության խորհուրդը (CCBE) նամակով դիմեց ՀՀ վարչապետին, ՀՀ Ազգային Ժողովի նախագահին և ՀՀ արդարադատության նախարարին, որտեղ հանգամանորեն ներկայացրեց իր նկատառումները փաստաբանական և նոտարական ծառայություններ մատուցող անձանց համար հսկիչ-դրամարկղային մեքենաների տեղադրման և կիրառման պարտականություն դեմ :

Փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտա-վերլուծական կենտրոնը նշված օրենքի վերաբերյալ 09.12.2010թ.-ին հանդես եկավ թիվ 02-10-Լ եզրակացությամբ: Կենտրոնի խորհուրդը գտել է, որ Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետի “դ” ենթակետով առաջարկվող փոփոխությունը.

Օրենքի նպատակի մասով գիտա-վերլուծական կենտրոնը հիմնավորել է նրանով, որ ելնելով

Օրենքի՝ իրական հասույթների նկատմամբ վերահսկողության հիմնական նպատակից, օրենսդիրն իրավացիորեն առևտրի օբյեկտների և վաճառատեղերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելիս պարտադրում է ՀԴՄ-ների կիրառում: Բնական է, որ մանրածախ վաճառք իրականացնելիս, երբ քաղաքացին ձեռք է բերում որևէ ապրանք, գրավոր պայմանագիր չի կնքում վաճառողի հետ (այլ կերպ ասած՝ հետք չի թողնում վաճառողի մոտ), ինչի հետևանքով հարկային վերահսկողությունը դժվարանում է: Սակայն բնակչությանը ծառայություններ մատուցելու մասով, օրենսդիրը նոտարական և փաստաբանական ծառայություններ մատուցողներին չի պարտադրել ՀԴՄ-ներ կիրառել: Ակնհայտ է, որ Օրենքի ընդունման հիմնավորման համատեքստում, օրենսդիրն իրավացիորեն փաստաբանական և նոտարական ծառայությունների մասով վերահսկողական խնդիրներ չի արձանագրել: Դա այն պարզ պատճառով, որ “Փաստաբանության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի կանոնակարգումից ելնելով, փաստաբանական ծառայություններ մատուցելիս պայմանագրի կնքումը պարտադիր է: Հետևաբար, հարկային մարմինը վերահսկողական իր գործառույթներն իրականացնելիս չէր հանդիպի այն դժվարություններին, որոնց կարող էր հանդիպել մանրածախ վաճառք իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մոտ: Նույն մոտեցումն առկա է նաև նոտարական ծառայությունների դեպքում, քանի որ նոտարական բոլոր գործարքները գրանցվում են սահմանված կարգով հաշվառված նոտարի սեղանամատյանում: Հետևաբար, հարկային մարմնի համար շատ հեշտ է վերահսկել նոտարների հասույթը:

Նախագծի հիմնավորման մեջ փաստաբանական և նոտարական ծառայությունների մասով ՀԴՄ-ների կիրառման անհրաժեշտության մասին որևէ փաստարկ չի բերվել, այդ թվում չի հիմնավորվել, թե նախաձեռնող մարմինն ինչու և ինչ հիմքերով է օրենսդրի սկզբնական դիրքորոշումը ցանկանում փոխել:

Փաստաբանների անկախության մասով եզրակացության մեջ Փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտա-վերլուծական կենտրոնը մասնավորապես նշել է, որ համաձայն “Փաստաբանության մասին” ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի ՝ փաստաբանությունը փաստաբանների մասնագիտական միավորում է, որը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, **<u>չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ</u>**:
Փաստաբանությունը գործում է **<u>անկախության</u>**, օրինապահության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության սկզբունքների հիման վրա: Փաստաբանների վրա տարածվում են այնպիսի առանցքային արժեքներ, ինչպիսիք են անկախությունը, կոնֆլիկտների բացակայությունը, ազնվությունը և մասնագիտական գաղտնիքի պահպանումը:

Կարևոր է նշել, որ փաստաբաններին վերաբերող կանոնները նպատակ ունեն պաշտպանելու ոչ թե փաստաբանների, այլ նրանց վստահորդների իրավունքներն ու արտոնությունները՝ արդարադատության արդյունավետ մատչելիության և իրավական կարգ ու կանոնի շահերից ելնելով:

Ինչպես նաև եզրակացության մեջ նշված է շատ կարևոր փաստարկ՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ հարկային մարմինը “Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին” ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն ՀԴՄ-ների կիրառման կանոնները ստուգելու հարցում անսահմանափակ քանակով ստուգումներ կատարելու իրավասություն ունի, այն փաստաբանները, որոնք պետական մարմինների հակառակորդների շահերն են պաշտպանում կարող են հեշտությամբ խնդիրներ ունենալ: Վերջիններիս գործունեությունը կարող է կասեցվել, ինչով նրանց վստահորդները կզրկվեն ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավաբանական օգնություն ստանալու իրավունքից:

Եվ վերջապես **փաստաբանական գաղտնիքի մասով** «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի համաձայն՝ փաստաբանական գաղտնիք են համարվում այն տեղեկությունը, որը վստահորդը փոխանցել է փաստաբանին, ինչպես նաև այն տեղեկությունները և ապացույցները, որոնք փաստաբանը փաստաբանական գործունեության իրականացման

ընթացքում ձեռք է բերել ինքնուրույն, և որոնք հայտնի չեն հանրությանը:

Սահմանված է նաև, որ արգելվում է փաստաբանին որպես վկա հարցաքննել այն հանգամանքների մասին, որոնք նրան հայտնի են դարձել իրավաբանական օգնություն ցույց տալու նպատակով իրեն դիմելու կամ իրավաբանական օգնություն ցույց տալու կապակցությամբ:

Փաստաբանը հրապարակում է փաստաբանական գաղտնիքը, եթե՝

Գիտա-վերլուծական կենտրոնի խորհուրդը նշել է նաև, որ Եվրախորհրդի թիվ R (2000) 21 հանձնարարականում գաղտնիությունը ճանաչվում է որպես փաստաբանի առաջնային և հիմնարար իրավունք և պարտականություն: «*Փաստաբանները պետք է հարգեն մասնագիտական գաղտնիությունը՝ ներպետական օրենսդրության, կանոնների և մասնագիտական չափանիշների համաձայն: Առանց վստահորդի համաձայնության գաղտնիության որևէ խախտում պետք է պատժվի համապատասխան պատժամիջոցներով*» (Սկզբունք III, 2): Ավելին, փաստաբանների դերի վերաբերյալ ՄԱԿ-ի հիմնարար սկզբունքներում նշված է, որ «*պետությունները պետք է ընդունեն, որ փաստաբանների և վստահորդների միջև մասնագիտական հարաբերությունների շրջանակներում տեղի ունեցող բոլոր հաղորդակցությունները և քննարկումները գաղտնի են, և պետք է հարգեն այդ սկզբունքը*» (Սկզբունք 22): Եվրոպական փաստաբանների առանցքային սկզբունքների մասին CCBE-ի խարտիան նույնպես անդրադառնում է վստահորդների գործերը գաղտնի պահելու և մասնագիտական գաղտնիությունը հարգելու փաստաբանների իրավունքի և պարտականության մասին:

Կենտրոնի խորհրդին անհանգստացնում է “Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով հարկային մարմնին տրված լիազորությունների կիրառումը փաստաբանների նկատմամբ: Նշված հոդվածի “գ” կետի համաձայն հարկային մարմինները ստուգում են հսկիչ-դրամարկղային մեքենաներին վերաբերող փաստաթղթերը, անհրաժեշտության դեպքում **պահանջելով տվյալներ և այլ տեղեկություններ, բացատրություններ, տեղեկանքներ,** որոնք անմիջականորեն առնչվում են իրենց իրավասության շրջանակներում իրականացվող ստուգման նպատակներին:

Հետևաբար, հարկային մարմնին “Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին” ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով տրված անսահմանափակ քանակով ստուգումներ կատարելու հնարավորությունը (այլ դեպքերում, որպես կանոն թույլատրվում է տարին մեկ անգամ ստուգում կատարել) հաշվի առնելու դեպքում, գործ կունենանք պետական մարմնի կողմից փաստաբանից իր վստահորդների մասին ցանկացած ժամանակ տեղեկատվություն պահանջելու բացասական երևույթի հետ:

Այս պայքարի արդյունքում միայն որոշ չափով մեղմացավ վիճակը, իսկ չպայքարելու դեպքում կառաջանային ավելի մեծ խնդիրներ, քան կարելի էր պատկերացնել: Այսպիսով, ՀՀ Ազգային Ժողովը միայն մի քանի փոփոխություններ կատարեց օրինագծում, մասնավորապես՝ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքում հաշվի են առնվել փաստաբանների գործունեության հետ կապված առանձնահատկությունները, նախատեսվել է օրենքը լրացնել նոր 5.1 հոդված՝ «Նոտարական և փաստաբանական գործունեության իրականացնողների կողմից հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման առանձնահատկությունները» վերնագրով: Նշված հոդվածով սահմանվել է, որ փաստաբանական գործունեություն իրականացնող անձինք

ՀԴՄ–ներ չեն կիրառի անկանխիկ գործարքների մասով : Նախատեսվել է նաև դրույթ, որի համաձայն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված գործունեության կասեցումը փաստաբանական գործունեություն իրականացնողների նկատմամաբ չի կիրառվի :

Վերջերս՝ 27.01.2011թ-ին տեղի ունեցավ ՀՀ փաստաբանների պալատի ակումբի նիստ, որին մասնակցում էին ավելի քան 30 փաստաբաններ: Նիստում զեկույցով հանդես եկավ փաստաբան Արա Ջոհրաբյանը, որից հետո տեղի ունեցավ քննարկում: Նիստի ժամանակ ինչպես իրավացիորեն նշեց փաստաբաններից մեկը՝ փաստաբանները պայմանագիր են կնքում և գումար են գանձում մեծ մասամբ ապագայում կատարվելիք աշխատանքի համար (մասնակցություն դատական նիստի և այլն) և մինչև աշխատանքը կատարելը դիմողը իրավունք ունի հրաժարվել աշխատանքից և ետ ստանալ իր գումարը, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ: ՀԴՄ-ի կիրառման դեպքում անհնարին կլինի կամ կդժվարանա գումարի վերադարձը դիմողին և կխախտվեն նրա իրավունքները:

Արա Ջոհրաբյանը հայտարարեց նաև, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալ Ա.Ալավերդյանի հետ պայմանավորվածության համաձայն, պետք է համատեղ քննարկվի այդ օրենքի հետ կապված խնդիրները և պաշտոնական պարզաբանումների միջոցով լուծվեն դրանք:

Քննարկման արդյունքում առաջարկվեց երկու ուղղություն `

““Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին” Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” **« ՀՀ օրենքը ուժի մեջ է մտնում փետրվարի 25 ից:**

ՀՀ Փաստաբանների պալատի խորհուրդը 14.02.2011թ-ի թիվ 3/7-Լ որոշմամբ հանդես է եկել հայտարարությամբ առաջարկելով փաստաբաններին առժամանակ ձեռնպահ մնալ հսկիչ-դրամարկղային մեքենաներ ձեռք բերելուց և գործարքներն իրականացնել միայն անկանխիկ (բանկային փոխանցումների միջոցով):

Կից ներկայացվում է ՀՀ Փաստաբանների պալատի խորհուրդը 14.02.2011թ-ի թիվ 3/7-Լ որոշումը

Հաստատված է՝

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի

14.02.2011թ. թիվ 3/7-Լ որոշմամբ

Պալատի նախագահ՝

..... Ռ.Սահակյան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

“Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի կիրառման վերաբերյալ

2011 թվականի փետրվարի 25-ից ուժի մեջ է մտնելու ““Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին” Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” ՀՕ-22-Ն Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ՝ Օրենք), որի համաձայն փաստաբանական գործունեություն իրականացնողները բնակչության հետ իրականացվող կանխիկ գործարքների դեպքում պետք է կիրառեն հսկիչ-դրամարկղային մեքենաներ:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Օրենքն ինչ-որ առումով վտանգում է փաստաբանի անկախությունը և կարող է խախտել փաստաբանական գաղտնիքի պահպանման իրավունքը,

հաշվի առնելով այն հանգամանքը, որ Օրենքի կիրառման հետ կապված որոշ հարցեր դեռևս բաց են մնացել և չեն կարգավորվել պաշտոնական պարզաբանումների միջոցով, ինչը փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտա-վերլուծական կենտրոնի կողմից կկազմակերպվի,

ի գիտություն ընդունելով այն, որ Օրենքի համաձայն՝ փաստաբանական գործունեություն իրականացնող անձինք հսկիչ-դրամարկղային մեքենաներ չեն կիրառում բնակչության հետ իրականացվող **<u>անկանխիկ</u>** գործարքների մասով,

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհուրդը

առաջարկում է՝

- առժամանակ ձեռնպահ մնալ հսկիչ-դրամարկղային մեքենաներ ձեռք բերելուց և գործարքներն իրականացնել միայն անկանխիկ (բանկային փոխանցումների միջոցով):

ՀՀ փաստաբանների պալատի

նախագահ՝ Ռ.Սահակյան

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })